

դամ՝ դատի ծաղկի տաք խաշուով և կամ մեկոնի իւղով, (Սպիտակ մեկոնի գլուխները քաղումեն երբ դեռ հասած չեն և լի են հիւթով, չորացնումեն և հարկաւոր դէպքում շինումեն նորանից խաշու վեց դրամամա 1 $\frac{1}{2}$, գրվանդայ ջրի մէջ, ականջը լուանալու համար դորձածելով այս խաշուն իրրեւ մի հանգստացուցիչ միջոց)։

Ականջին կարելի է դնել նաև սպեղանի վշի սերմից, և ոտները տաք ջրի մէջ դնել. եթէ ականջից սկսումէ հոսել, հարկաւոր է ցինկի տաք լուծուածքով ողողել (մի դրան ձմաթաթթուածային ցինկից մի ունց ջրի հետ)։

Խոն անելու է, երբ ականջի մէջ ուռոյց կայ։

Սպասելու է մինչև որ նա հասնի և ինքն ըստ ինքեան պատուի, ոչինչ չգործածելով սորա համար բացի ծառի իւղով թրջված բամբակից, որը պահպանելով ուռոյցը օդի ազդեցութենից, միևնոյն ժամանակ օգնումէ նորա շուտ հասնելուն և պատուիլուն։

Կ. Վ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄԱՌԹԵԱՆ ՀԻՆ ԱՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՔՆՆՈՒԹԻՒՆԸ, ԱՐԱՐԱՏ, (Արարատ, 1879, դեկտեմբեր)։

Նախընթաց գլխում մենք խօսեցանք, որ Հայաստանի և Հայերի մասին եղած հնագոյն զրոյցները հասած են մեզ Խորենացու պատմութենից, որ կապրէր Ե. դարի կէսում Քրիստոսի ծննդից յետոյ, Խորենացին իւր պատմութիւնը կսկսէ Նոյից (գիրք Բ. զԼ. Ե.) և նորանից յառաջ կրերէ Հայերի ազգաբանութիւնը Նոյ, Յֆֆէ, Գֆէ, Թէր, Թորգոմ Հայերի առաջին ցեղապետներն են։ Նա կասէ, որ այս ազգաբանութիւնը քաղած է հին ճշմարտապատում պատմիչներից (?) Նոյի թոռան որդուն Թիրատի վերաբերմամբ, որը Մենգոց զբքի մէջ նորա թոռը (Թէր) կկոչվի, նա մատնանիշ կլինի մի դիտնական և բազմաճուտ Ասորու վերայ (?) դարձեալ նորա անունը չյիշելով։ Յետոյ հետեւեալ կարգով յառաջ կրերէ նա Թորգոմից սերած սերունդի ազգաբանական շարքը, որից սերվեցաւ հայկական ազգը. «Հոյ, Արֆէ, Արֆէ, Արֆէ, Գեղմ, Հարմ, Արմ, Արմ Գեղեղի. ընդ ամենը Յարէթից 12 սերունդ, այս տեղեկութիւնը, ինչպէս ինքն Խորենացին կասէ, քաղած է Արիւղենոսից, առաջնորդ, որ չէ յիշատակում Հայկի մասին, ինչպէս կերելի նախընթաց գլխում յառաջ բերված նոյն իսկ քաղուածից։ Այսպէս հասցնելով իւր ազգի ազգաբանութիւնը օտար պատմիչների համաձայն մինչև Նոյ, Խորենացին մանրամասնութիւնների համար կդառնայ դէպի իւր գլխաւոր պատմիչը, Մար - Արաս - Վատինա Ասորին (զԼ. Թ. — ԺԵ.) և կքաղէ նորանից այն տեղեկութիւնները, որոնք նա հարկաւոր կհամարի հաղորդել ապագայ սերունդին։ Մենք համառօտապէս կարտադրենք այս գլուխների բովանդակութիւնը։

Առաջին աստուածներէց, աշխարհի բոլոր բարիքների պատճառներից, յառաջացաւ հոգիների սերունդը, որոնց մէջ ծնւեցաւ աշտարակաշինութեան ամբարիշտ խորհուրդը:

Բայց շինելու ժամանակը աստուածների բարկութենից ահագին հողմը բարձրացած կցրուէ աշտարակը, և աստուածները, տալով ժողովրդին միմեանց անհասկանալի լեզուներ, նոցա շփոթութեան մէջ ձգեցին: Հսկաներից մինը, որ մասնակից էր աշտարակաշինութեանը, քաջ ցեղապետ (Հայերի) Հայկ էր Թեկուտի որդի Սեբեի որդու, Մեբեի որդու (որ աւելի ճիշտ է Մերոզի), Յոթեպուտի որդու կամ Թէ Նոյն է. Թորգոմին, Թիրասին, Գամբին, Յարեթին: Այս Հայկը չկամենալով Բէլին հնազանդել, որ զիտաւորութիւն ունէր տիրապետելու ամբողջ աշխարհին, Բարեխոսում իւր Աբեշու որդին ծնելուց յետոյ, զնաց դէպի հիւսիս Արարազ *) երկիր իւր որդիներով, աղջիկներով, թոռներով, հղօր մարդիկներով, որոնց թիւը մօտ երեք հարիւրի կհասներ, իւր ընդօժիններով և ուրիշ նորա հետ յաւաններով: Այստեղ նա մի սարի ստորոտում բնակեց, որտեղ էլ իւր զօրքերէն մի քանիսն էր: Երբ Հայկը նախապէս խորհնացին իւրեանց, կարգաբացնէ անգիր հին ասլած զրոյցները: Այստեղ նա կշինէ իւր համար բնակարաններ և կտայ իւրեւ ժառանգութիւն իւր թոռն Պաղմոսին, Արմենակի որդուն:

Ինքն ևս Հայկ իւր մնացած մարդիկներով կուղևորի դէպի արեւմտահիւսիս և կբնակէ բարձրաւանդակ հովիտում, որը կանուանէ Հաբա **): Այստեղ ևս կշինէ նա գիւղ և իւր անունով Հայկաշէն կանուանէ: Հայկ այստեղ ևս կգտնէ իւրեանց առաջ ապրող մարդիկների մի փոքրիկ խումբ, որոնք իւրեանց կամքով հնազանդեցան զիւրացանքին: Այս նոյնպէս կարգաբացնէ անգիր զրոյցները:

Երբ Տիտանեան — Բէլը կտարածէ իւր իշխանութիւնը ամենքի վերայ, կուղարկէ Հայկի մօտ իւր որդիներից մինին, ասելով. եկ հնազանդիր և բնակիր, ուր որ կկամենաս: Բայց Հայկը խստութեամբ կպատասխանէ զեսպանին և կմերժէ հնազանդութիւնը: Այն ժամանակը Բէլը մեծ զօրքով կմտնէ Արարազ երկիրը և կմօտենայ Պաղմոսի բնակարանին, որ կվազէ իւր պապի մօտ և նորան կիմացնէ Բէլի ***): զալուստը:

(*) Այս Արարազ կոչւած լեռնոտ երկիրը կգտնվի Ուրմու եւ Վանի լճերի հարաւային կողմը, ուր կանցնեն Տորոս եւ Զագրոս սարերի ձիւղերը միացնող սարերը: Խորենացու գիրքը Թարգմանողները եւ մեկնողներն, որոնք սխալված են Արարազի երեսին մօտ գտնված հայկական Արարատ նահանգի անունի հետ ունեցած նմանութենից, կշփոթեն այս երկու անունները միմեանց հետ: Տեքքեւ մենք ուշք կգործենք Արարազի եւ Արարատի զանազան նշանակութիւնների վերայ:

(**) Այս Հաբա նահանգը կգտնվի Կոնստ. Գիրամանի մէջ: De adm. ԴԷ. 44.

(***) Երկրորդ գլխում մենք աշխատեցինք ակներեւ ցոյց տալ, թէ Մար—Աբասը ժողովրդական երգերի եւ առասպելների չոր ու ցամաք բովանդակութիւնը մեզ կհաղորդէ իբրեւ պատմութիւն: Խորենացին իւր սովորութեան համաձայն քաղելով Մար—

Այն միջոցին, երբ Բէլը անարգել յառաջ կերթար, որ Հայկին ջարդ տայ, այս հսկայն (այսինքն Հայկ) կարողացաւ ժողովել Աւէլճի (Վաշի ? *) ասիի վերայ իւր որդիներին, թոռներին, հօր և քաջ աղեղնաւորներին և ասաց նոցա մի քանի քաջալերական խօսք։ Նորանից յետոյ անցնելով սարերի մէջ, Հայկը և նորա զօրքը տեսան մի բարձրաւանդակի վերայ Բէլի զօրքը, իսկ փոքր ինչ հեռու նոյն ինքն Բէլին, որ շրջապատված էր իւր զրահաւորված զնդով։ Այստեղ Հայկը իւր զօրքը պատերազմական կարգի դրաւ, յանձնելով աջ թեւը Արմենակին և ձախը Վաղմոսին, իսկ ինքն առաջ կանգնեցաւ, և ամբողջ կարգին եռանկիւնի ձեւը տալով, հանդարտ սկսեց յառաջ գնալ։

Սկսվեցաւ սարսափելի պատերազմ հսկաների մէջ, նոցա պատերազմի ձայնից երկիր կըրդէր։ Հայկը Բէլի անզգուշութենից օգուտ քաղելով, կլարէ իւր աղեղը և մօտենալով նորան կղպնէ լանջոսկրին այնպէս որ նեղը դուրս գալով թիկունքից ընկաւ գետին։ Գոռոզ Տիտանեանը չկարողանալով դիմանալ, մեռած ընկաւ գետնի վերայ։ Նորա զօրքը ի փախուստ դարձաւ։ Պատերազմի տեղը Հայկը շինեց մի զիւղ Հայք անունով, որից այն նահանգը կանուանվի մինչև այսօր Հայք Եր։ Իսկ այն բլուրը, ուր Բէլը ընկաւ, անուանեց Գեդեմա։ Բէլի մարմինը բերին Հաղբ և այնտեղ թաղեցին։ Այն ժամանակից մեր աշխարհը անուանվեցաւ Հայք։

Հայկի մահից յետոյ նորա անդրանիկ որդի Արմենակը, որին հայրը յանձնած էր իւր բոլոր ժողովուրդը, կբաժանէ իւր բոլոր երկիրները Հարքում իւր Խոռ և Մանաւազ եղբայրներին։ Մանաւազ կժառանգէ Հաղբը, իսկ նորա որդի Բազն Աղի լճի հիւսիսա—արեւելեան ափը, եւ սոցանից յառաջացան Բղնունեան և Մանաւազեան նահապետութիւններ։ Իսկ Խոռը բազմանալով կտարածվի դէպի հիւսիս, և նորանից կյառաջանայ Խոռխոռունի նախարարութիւն։

Իսկ ինքն Արմենակը բոլոր իւր ընդոճիւններով կերթայ դէպի հիւսիսա—արեւելք և կընակէ բարձրագագաթ սարերով պատած դաշտավայրում, որի մէջով արեւմտեան կողմից կանցնեն կարկաջասահ գետեր, իսկ հարաւային կողմը կգտնվի սպիտակափառ գագաթով բարձր սարը։ Այս սարը իւր անունով կանուանէ Արմենակ Արագած (այժմս Ալագեազ)։ Եւ այստեղ,

Առասից, աւելի չոր ու ցամաք կհաղորդէ մեզ ժողովրդական սկզբնական երգերի բովանդակութիւնը, իսկ մինչ նոցա բովանդակութիւնը աւելի եւս համառօտելով կհաղորդենք միայն այն բանի կամեքը, որի մէջ երբեմն ժողովուրդ կմարմնացնէր իւր պատմութիւնը։

(*) Վանի լիճը Հայաստանի լճերից ամենամեծն է եւ զանազան անուններ կկրէր օրինակ Աղթամարի, Բզնունեաց, Ռշտունեաց, Տոսպի, Վասպուրականի ծովը եւլն։ Հները նորան կանուանէին Arsissa, Arsene, Thospis լիճ, Ասորի արձանագրութիւնների մէջ նայիրի ծով—բանտհիւղի մէջ, ըստ ամենայն հաւանականութեան, այս լիճը կանուանվի Bazaivan, Եր. 36։

կասէ պատմագիրն, մեր նախահայր Հայկի գալուց առաջ կապրէին մարդիկ։

«Արմենակի որդի Արամայիս կշինէ իւր համար բնակութիւն գետեղորի մի բլրակի վերայ և իւր անունով կանուանէ Արամայի, իսկ գետը իւր երեսով թողի անունով երեսի (Արաքս)։ Իւր որդի Շուշի կրնակեցնէ Արագածից դէպի հիւսիս մի արգաւանդ դաշտում, որի անունով այս գաւառն անուանվեցաւ Շիւշի։ Արամայիսի որդի և ժառանգ Ամասիայ անունով կմնայ առժամանակ Արմաւիրում։ Նա ունէր երեք որդի. Գեղա, Փարս և Յուսի։ Անցնելով գետը, Ամասիայ հարաւային սարի ստորոտում երկու բնակութիւն կհաստատէ իւր երկու որդիների Փառսի և Յոլակի համար, որոնց անունով այս բնակութիւններ անուանվեցան Փառսոտ և Յոլակերտ *). Իսկ սարը (Մեծ Արարատ) Ամասիան անուանեց իւր անունով Մասիս։ Գառնալով Արմաւիր, նա կմեռնի, յանձնելով ժառանգութիւնը իւր Գեղամ որդուն։

«Գեղամ յանձնելով Արմաւիր իւր Հայկի որդուն, ինքն կերթայ միւս սարի հիւսիս - արեւելակողմ դէպի լիճ (Գեօղջա), որի ափի վերայ կշինէ բնակութիւն և կանուանէ Գեղաշենի, իսկ սարը Գեղ (Ակմանգան կամ Ակ - դաղ)։ Այստեղ ծնաւ նա իւր Սիւսի որդուն, որը վայելեակազմ և հպարտ մարդ էր, և որին տալով Գեղամ իւր ստացուածի նշանաւոր մասը կրնակեցնէ նորան լճի արեւելակողմ, տալով նորան ժառանգութիւն բոլոր նահանգը մինչ այն տեղը, ուր Երասխ գետը կկտրէ սարերի քարանձաւները և ահագին զոլորէնով դաշտ կիջնէ։ Այստեղ բնակելով Սիսակը կլցնէ շինութիւններով իւր բնակութեան սահմանները և աշխարհն իւր անունով Սիւսի կանուանէ, իսկ Պարսիկներն աւելի ճիշտ և աւելի պարզ Սիւսի կանուանեն։ Խորենացին ուրիշ տեղում (գր. Բ. զԼ. Ա) կասէ, այս Սիսակին իւր քաղցր և համեստ բնաւորութեան համար (բնագրի մէջ բոլորովին պարզ չէ թէ որի մասին է խօսքը) կկանչէին Աշուս, ուստի և նորա երկիրը անուանվեցաւ Աշուսի (Ալեանիա), նորա սերունդներից Աշուս անունով մէկից յառաջացան Ուրտեշիներէ, Գարշաշիներէ, Ծովդեշիներէ և Գարշաշիներէ ցեղերը։

«Այնուհետեւ Գեղամը կշինէ նոյն սարի ստորոտում Գեղաշի անունով բնակութիւն, որ յետոյ նորա Գառնիկ թոռի անունով Գառնի անուանվեցաւ։ Նորա յաջորդն էր Հարմայ։ Այստեղ պատմագիրը կանգ կառնէ, կարծես թէ հանգստանալու, և համառօտիւ կերկրորդէ անունները, աւելացնելով. «Ահա Հայկ Թորգոմի որդի, Թիրասի որդու, Գամբրի որդու, Յարէթի որդու, Հայերի նախահայրը, Ահա նորա ցեղերը, ծնունդները և նոցա բնակած աշխարհը, նորանից յետոյ պատմագիրը կասէ. «նոքա բազմացան և լցրին երկիրը»։ Աերեւի թէ այստեղ կվերջանայ հին հայկական շրջանի

(*) Այս տեղը յայտնի է եւ մեր ժամանակը, հորա մէջ գտնված է վանի սեպագրերի նման սեպաձեւ արձանագրութիւն, որը հրատարակված է 1870 թուի «Արարատ» ամսագրում։

պատմութիւնը, և թէ հետեւեալ պատմութիւնը Խորենացին կամ նոյն ինքն Մար Աբասը ուրիշ աղբիւրներով պիտի շարունակեն: Բայց կապակցութեան համար հետեւեալ անձն, որը հայկական * հին պատմութեան շրջանում առաջուց չէր գտնվում, կմուծվի նորա մէջ, պահպանելով ազգային պատմութեան օրէնքը: Այս նոր անձն է Աբամ, որին մեր կարծիքով կապակցութեան համար Արմենակի վերջին սերունդի Հարմայի որդի կհամարէ հեղինակը: Այս կարծիքի մէջ կհաստատէ մեզ այն հանգամանքն ևս, որ Մար Աբասը (զլ. ԺԳ), ինչպէս ինքն կխոստովանվի, (թէ և բնագրի մէջ մութ է) քաղած է Արամի մասին եղած աւանդութիւններն ոչ թէ այն գրքից, որտեղից կառնէր բոլոր նախնիների պատմութիւնը, այլ մի քանի աննշան երգիչների երգերից, որոնց շարադրութիւնները իբրեւ թէ կգրանվէին թագաւորական գիւանատներում (նինուէի?): Աւստի ամեն բան մեզ կստիպէ ենթադրել, թէ Արամի ազգականութիւնը հին հայկական աւանդութիւնների անձնաւորութիւնների հետ բաւական ուշ է մուծված, և թէ Արամի քաջութիւնները ըստ ինքեան վիպասանական պատմաների առանձին շրջան կկազմէին: Նա Հայաստանի պատմութեան մէջ նինոսի դերը կխաղայ, այսինքն կմարմնացնէ իւր մէջ Հայերի պատերազմական քաջութիւնները և աշխարհակալական ձգտումները նախապատմական ժամանակում, այս բառով Հայաստանի զանազան կողմերում Հայերի բնակութիւնը հաստատելու միջոցը հասկանալով:

Լսենք թէ վերջն ինչ կասէ Խորենացին.

«Արամայ բազում գործք քաջութեան պատմեն մարտիւք նահատակութեան և ընդարձակեալ զսահմանս Հայոց յամենայն կողմանց, յորոյ տնուն և ամենայն ազգք զաշխարհս մեր անուանեն, որպէս Յոյնք - Աբդէն և Պարսիկք և Ասորիք - Արմէիք»:

«Արամը, կասէ պատմագիրն (երեւի նոյն Մար Աբաս է) յարձրացաւ գահը նինոսի թագաւորութեան վրէժն աշխատանքով, երբ Հայաստանը նեղված էր իւր շորս կողմ գտնված օտարազգիներից, նորա առաջին գործն եղաւ հալածել այս օտարազգիներին, մաքրել և որոշել իւր տէրութեան սահմանները: Այս նպատակով նա երեք պատերազմ մղեց, զէպի արեւելք, զէպի հարաւ և զէպի հիւսիս:

«Արեւելքում նա պատահեց Մարերին (Մեդացիներին), որոնց առաջնորդ էր Նիւքար կոչված Մարգէս անունով մէկը, որ հպարտ և պատերազմասէր մարդ էր: Արամը յաղթեց Մարգէսին, բռնեց նորան և բերաւ Արմա իր և այնտեղ աշտարակի ծայրի վերայ մեխեց: Հայաստանի սահմաններն այս կողմից ընդարձակվեցան զէպի Մարաստան մինչև Զարասպ սարը:

Երբ որ նինոսը թագաւորեց նինուէում, յիշեց իւր նախահայր Բէլի թշնամութիւնը զէպի Հայերը, և յարմար միջոց կպտէր Հայկի բոլոր ցեղը ոչնչացնելու: Բայց երկիւղ կրելով իւր տէրութեան խռովութենից, և թողնելով Արամին նորա աշխարհակալութեամբ ձեռք բերած երկիրները, հրաման կտայ նորան մարդարտեայ վարսակալ կրելու և իւրեանից յետոյ

Երբեք անուանվելու (այսինքն Նինոսից յետոյ)։ Նորանից յետոյ Արամը ուշք կգարձնէ իւր հօր սահմանների վերայ, որոնք ենթարկված էին հրահանքի ցիղից Բաբելոնի Ասորեստանցու աւերման։ Յաղթելով Արամը հալածեց նորան Կորդուխի երկիրների մէջով զէպի Ասորեստանի դաշտերը։ Ինքն Բարշամ ընկնելով նորա զինակիրների ձեռք, կսպանվի նոցանից։ Հետագայ ժամանակներում Ասորիներն աստուածացրին այս Բարշամին իւր բազմաթիւ քաջութիւնների համար։ Իսկ Արամը Ասորեստանի դաշտերի ընակիչների մեծ մասը հարկի տակ դրաւ։

Յանձնելով իւր արեւելքում նուաճած երկիրները Սիսակի սերունդին, իսկ Ասորեստանը Կադմոսի սերունդին, Արամը բոլոր իւր զօրութիւններով զարձաւ զէպի արեւմուտք, ուր պատահեց նորան Տիտանեան Պայապիս Կապադովկիացի, որը կտիրէր երկու ծովերի, Պոնտոսի և Ուկկիանոսի (Միջերկրական ծովի) մէջ տեղ եղած բոլոր երկիրներին։ Արամը յաղթեց նորան և տիրեց նորա երկիրներին։ Թողնելով նոր նուաճված երկրում իւր ազգից Մշակ անունով մէկին, որ Մշակ քաղաք շինեց և յետոյ անուանվեցաւ Կեսարիա, Արամը հրաման տուաւ այն երկրի ընակիչներին որ հայերէն սովորեն։

«Արամը իւր արեւմուտքում նուաճած բոլոր երկիրները չորս նահանգի բաժանեց, անուանելով Առաջին, Երկրորդ, Երրորդ և Չորրորդ Հայք։

«Այնուհետեւ Արամը մեռաւ, թողնելով իւր իշխանութիւնը իւր Արայ Գեղեցիկ որդուն։ Նորա ժամանակակից, Ասորեստանի Թագուհի Շամիրամ (Ամիրամիս) կցանկար նորա հետ ամուսնանալ, բայց երբ Արայ Գեղեցիկը մերժեց նորա ցանկութիւնը, նա իւր բազմաթիւ զօրքի զօրագլուխ զառնալով մտաւ Հայաստան և արիւնահեղ պատերազմում յաղթեց նորան։ Ինքն Արան ընկաւ պատերազմի դաշտի մէջ, որը նորա անունով Այր-Էր-Էր այսինքն Արայի դաշտ անուանվեցաւ։ Անմահիթար Թագուհին հրամայեց բերել տալ Արայի դիակը և զնեւ իւր ապարանքի վերնատանը, ի նկատի ունենալով կենդանացնել նորան իւր կախարգութիւնների զօրութեամբ։ Երբ դիակը սկսեց լուծվել, նա դուրս բերաւ իւր սիրականներից մէկին, և լուր տարածեց թէ աստուածներ լիզեցին Արայի վէրքը և կենդանացրին նորան»։

Որովհետեւ Արայի պատմութիւնը սերտ կապ ունի Շամիրամի պատմութեան հետ, ուստի նորա մասին մենք առանձին կխօսենք, քննելով Շամիրամի նշանակութիւնը հայկական առասպելական պատմածների մէջ։

«Արայի մահից յետոյ Հայաստանն ընկաւ Ասորեստանի Թագաւորների իշխանութեան տակ։ Արային յաջորդեց նորա որդի Կորդուք, որին Շամիրամը ի յիշատակ իւր հօր Արայ անուանեց։ Նորանից յետոյ միմեանց յաջորդեցին Անուշաբու, Պրեք, Աբեհի, Զաւան, Փաւսուս Սուր, Հաւանի, Վաշ-Էր, Հաշի, որ կապրէր Բելոքոսի ժամանակը և մեռած է խոռովութեան միջոցին։ Նորանից յետոյ Աբեհի, Անուշ, Շաւուր, Նուրյը, Վաշու-

էր *) Գոռնի, Հրաշ, Ընդի, Գլուի, Հերշ, Զարհար, որին Ասորեստանի թագաւորը կուղարկէ եթովպացի զօրքի հետ Պրիմոսի օգնութեան Տրոյայի պատերազմում: Այս պատերազմի մէջ Զայրմայրը սպանվեցաւ Հէլլենների քաջերից: Նորանից յետոյ կգան Պէրճ, Ուրբա, Բողնի, Հոյ, Յոռնի, Կոյ-դի, Սիւրբի, Պրոյր, Սարգանապալի ժամանակակից: Վարրակէս Մեղացին Պարոյրի օգնութեամբ կարողացաւ յափշտակել Սարգանապալից թագաւորութիւնը և նուաճել Ասորեստանը և Նինուէ: Այս ծառայութեան համար, Վարրակէսը արքայական թագ կրելու իրաւունք տուաւ Պարոյրին:

Խորենացին, Պարոյրի այս քաջութիւնը նկարագրելու միջոցին, կասէ: « Ես այժմս մեծ արախութիւն կգգամ, հասնելով այն տեղը, ուր պէտքէ խօսել մեր քննիցեղապետի մասին, որ թագաւորական աստիճանին է հասած: »

Սորանով մենք կաւարտենք Մովսէս Խորենացու պատմութենից արած քաղուածը: Այժմ մեզ համար հետաքրքրելի է այս շրջանը, որից յետոյ ըստ ամենայն հաւանականութեան, Վանի ժայռերի վերայ եղած արձանագրութիւնների կրեման ժամանակը կհետեւի, այսինքն թագաւորների զարը, որոնք Բելիտոլիսի Ա.ից յետոյ միմեանց յաջորդած են, և որոնց մասին մեր յօդուածի առաջին գլխում յիշատակեցինք:

Խորենացու պատմութենից մեր յառաջ բերած գլուխները ուշադրութեամբ կարդալուց կհամոզվինք, որ հին ժամանակում հարաւային Հայաստանը Վանի լճի շրջականերում և նորանից փոքր ինչ հարաւ, Արարազ կանուանվէր, և թէ այս Արարազի զանազան տեղերում, ինչպէս բուն Հայաստանում, Երասխի վերին հոսանքի ուղղութեամբ, կրնակէին մարդիկ Հայիրի գալուց առաջ: Ուրեմն ինքն Խորենացին Հայերին երկրի բնիկներ չէր համարում, այլ գաղթողներ և նուաճողներ:

Հայաստանի հին պատմութեան մնացած մասի վերայ մենք պիտի խօսենք մի ուրիշ տեղում: Այժմ զբաղինք մեր Խորենացու պատմութեան առաջին գրքից քաղած առաջին կէսի բովանդակութեան քննութեամբ:

Մենք շատ անգամ ասացինք, որ Խորենացին իւր պատմածը (նորա կարծիքով պատմական) հաստատելու համար յաճախ յառաջ կբերէ ազգային երգերից փոքրիկ հատուածներ, և մատնանիշ կլինի իւր ժամանակն եղած աւանդութիւնների վերայ: Բացի ժողովրդական հեղինակութիւնների մասին արած նորա ուղղակի ցուցմունքից, եթէ կարեւոր ուշաք դարձնենք մինչև անգամ այն գլուխների ոճին և ձևին, որոնց նա քաղած է Մար Աբասից, նորա մէջ նոցա բանաստեղծական

(*) Յովհաննէս Կաթողիկոսի պատմութեան մէջ կգտնվին մի Վստասկարի տեղ երկու թագաւորների անունները, Վստամ եւ Կար, ուրեմն Շամիրամի ժամանակակից Արայից յետոյ մինչև Սարգանապալի ժամանակակից Պարոյր թագաւորը, բոլորն միասին 30 թագաւոր կհաշուի:

ժաղաման աներկրայելի նշաններ կգտնենք, որ և վերև երկրորդ զբլ-
խում մեզ հարկադրեց հաստատել, թէ Մար Աբասը ոչ թէ նինուէի
դիւանատներից քաղած է հին Հայաստանի պատմութիւնն, այլ իւր ժամա-
նակի ժողովրդական պատմածներից, Հեղինակը կնկարագրէ իւր դիւցա-
ղուններին, որոնք երկու հազար տարի Քրիստոսի ծննդից առաջ կապրէին,
այնպիսի խօսքերով, որոնց մէջ անկարելի է շեկատել հին աւանդութիւն-
ների բանաստեղծական հետքերը, այնպիսի ածականներ կոպի նոցա, որոնք
անգործածելի են պարզ պատմական ոճի մէջ, և նոցա այնպէս ներգոր-
ծել կոպի, ինչպէս որ կգործեն դիւցաղունները վիպասանական երգե-
րի մէջ, և ոչ թէ պատմական պատմածներում: Իհարկէ սկզբնական բա-
նաստեղծական ձևը աղաւաղված է շափածոյ գրվածը արձակ շարադրու-
թեան վերածելու և այս արձակը յունական կամ սիրիական լեզուով
թարգմանելու միջոցին, Բայց նա աւելի կորցրած է իւր զուարթութիւնն և
կենդանութիւնը սիրիական (կամ յունական) լեզուից երկրորդ անգամ
համառօտապէս հայերէն թարգմանելու միջոցին, Խորենացու չոր և ցամաք
գրչի տակ, Ուստի շատ զարմանալի չէ, որ առաջին անգամից Խորենացու
ծանրակշիւ հեղինակութեան մէջ դժուար է նկատել քանի մի գլուխների
վիպասանական բովանդակութիւնը և նոցա բանաստեղծական ծագումն:
Միայն այն փաստը, որ նոցա մէջ միշտ արտաքին կերպարանքը, ոչ որից
չտեսնված ցնդապետ—դիւցաղունների մարմնական և բարոյական կատա-
րելութիւններ կնկարագրվին, կապացուցանէ, որ այս նկարագրութիւններն
փոխ առած է հեղինակը ոչ թէ պատմական յիշատակարաններից, որոնք
չէին կարող լինել անգամ, այլ ժողովրդի բանաստեղծական հեղինակու-
թիւններից: Ահա ինչպիսի ածականներ կտրվին, օրինակ Հայկին, քեղ-
պարշաւ և ռննեայ, քեղ-քեղաբար, խաբարն և հաբարաբար, սա ի մէջ սկա-
յիցն քաջ և երևելի լիալ, (գիրք Ա. զԼ. Ժ.), Հայկազեան Տիրարանի
մասին կասվի, (զԼ. ԵԳ.) թէ նա էր խաբարն և քեղքեղ քարե-
քեղեան և քեղաբար, ռննեայն և խաբարն և հաբարաբար, որ-
քեղն է քեղաբար և յաբարն և ի խաբարանքինն քեղաբար: « Զորմէ, կաւե-
լացնէ Խորենացին իւրեանից, ասէին ի հինսն մեր, որք քաբարաբար երգէին,
լինել սմա և ի քաբարնն մարմնոյն լաբար, քեղքեղաբար և քեղաբար: Միւ-
նոյն բան կերելի Շամիրամի և Աթղահակի մասին գրված գլուխներում,
որտեղ հեղինակը կշիտթէ երկու անձնաւորութիւններ դիւցաբանական—
քեղքեղ և Մարաստանի պատմական—վերջին Թագաւորին, Որքան կմտե-
նանք նոյն ինքն Խորենացու ժամանակին, այնքան աւելի կգտնենք նորա
մէջ վիպասանական ձև ունեցող ազգային երգերի ցուցմունքն: Այսպէս
օրինակ Խորենացին Արտաշէս Բ.ի կեանքը պատմելիս (89—129 Գ. ծ.
յետոյ), դառնալով դէպի Սահակ Բագրատունին, կասէ, (գիրք Բ. զԼ. ԽԹ.)
« Արտաշիսի վերջնոյ գործք բազում ինչ յայտնի են քեզ ի վիպասանացն,
որ պատմին ի Գողթան. շինել զքաղաքն, և խնամութիւն ընդ Ալանս և
ծնունդք զարմիցն, և իբր տրփանք Սաթմիկան ընդ վիշապաղունսն առաս-

պելարար, այսինքն ընդ զարմն Աշտահակայ *), որ ունին զամենայն զառստորոտովն Մասեաց (Բ. Արարատի)․ մարտ ընդ նոսա և քայքայումն յիշխանութենէն, սպանումն նոցա և հրկիզութիւն շինուածոցն և նախանձ որդւոցն Արտաշիսի և գրգռութիւն ընդ միմեանս ի ձեռն կանանցն — այս ամենայն, որպէս ասացաք, յայտնի են քեզ յերգս վիպասանացն ։ ։ ։ ։ Յետոյ Խորենացին կսկսէ Արտաշէսի պատմութիւնը, նորա ուղարկած ծրագրի համաձայն և կգրէ Արտաշէսի պատմութիւնն ժողովրդական երգերի համաձայն իւր ընդունած ձևով, ինքն կհաղորդէ երգերի չոր և համառօտ բովանդակութիւնն և այդպիսի ժողովրդական երգերի բովանդակութիւնը կանուանէ պատմութիւն։ Բոլոր մեր վերոյիշածներն պարզ կհաստատեն թէ եղել են Հայաստանում մինչև անգամ Խորենացու ժամանակը պատմական և վիպասական երգերն, մանաւանդ Գողթն գինաւէտ գաւառում։

Հետեւեալ կհաղատութիւններն համար մեզ հարկաւոր է քննել օտարազգերից և բնիկներից Հայերին տուած անուններից մի քանիսը։ Նախ ուշք դարձնենք երեք տոհմական բառերին, որով կանուանվին Հայերը, Հայեր, Արմէներ (Արմէներ) և Թարթարներ կամ Թարթար սերունդներն։

1. Հայեր, Այսպէս կոչեն Հայերը իւրեանք իւրեանց, բայց յայտնի չէ թէ որ ժամանակից նոքա սեփականացրած են այս անունը։ Ըստ ամենայն հաւանականութեան, սկզբում նա մի առանձին ցեղի անուն է եղած, որն յետոյ տիրապետելով միւս ցեղերին, տուած է նոցա իւր ցեղական կոչումն։ Այս մասին արդէն ասած ենք մեր յօդուածում․ «Քանի մի խօսք հին հայկական ամիսների անունների մասին», երես 23—24, Խորենացին (գիրք Ա. գլ. ԺԱ)․ նկարագրելով Հայերի առաջին նախահայր Հայկի գործունէութիւնը, փոխ առնելով իւր պատմութիւնը Մար Արասից, կսկէ․ «Այստեղ մեր կոչի յանուն նախնւոյն մերոյ Հայկայ Հայք»։ Ահներե է որ ոչ թէ նախահայրն ինքն տուաւ իւր անունը երկրին, այլ այս հանգամանքում ինքն եղած է ժողովրդի և երկրի ծնունդ, որովհետեւ Հայաստանին բնիկներն կասեն Հայերի երկիր և հող, Հայաստան։

2. Արամեաններ (Արմէներ)։ Ժողովրդի միւս հանրաձանօթ անունն է Արմեաններ, իսկ երկրին—Արմէնիա, որ Հայերի մեջ անգործածելի է։ Այսպէս կանուանեն նոցա բոլոր ժամանակակից և արիական հին ազգերը (բացի Վրացիներից, որոնք Սպէի կանուանեն)։ Առաջին անգամ այս անունը կպատահէ Դարեհ Հիստասպեանի (521—485 Ք. ծն. առաջ) Բիստատունեան արձանագրութիւնների մեջ, պարսկական և Մարասկիւթական լեզուներով այս ձևով․ Armaniya, Armina — Արմէնիա (Հայաստան) և Arminiya — Արամեան (Հայ)։

(*) Այս անունը կազմված է զենդական երկու բառից․ աթի — օձ եւ դաճակայ — կորստական Հայկական Աթգաճակ անունի ձեւը աւելի կմտնեայ նախնային Աթգաճա իբրեւ հատարակ անունն իրանական շատ լեզուներում վերայ կշտնակէ։

Յուճական մասնագիրներինց միւսներինց վաղագոյն կ'իշխատակեն Արամեանների մասին Հեկատէի և Հերոդոտոս (ծն. 484 Ք. Տ. առաջ), Ուստի Արմէնիա անունը առաջին անգամ Ք. Տ. առաջ Զ. դարինց վաղ չէ պատահում։ Այս ժամանակից վաղ այս անունը ոչ մի տեղ չէ գտնվում կամ ուրիշ խօսքով, մինչև այժմ չեն գտնված յիշատակարաններ, որոնց մէջ նա վաղագոյն յիշվէր, Հին մատենագիրները պահպանած են զանազան տեղեկութիւններ ազգի ծագման և Արմէաններ անունի մասին։ Հերոդոտոսը (Լ. 73) նոցա ծագումը Փրիւզիացիներից յառաջ կրերէ, Ստրաբոնը (գիրք XI, եր. 530) կասէ այսպէս։ «Արմէն, որ Թեսալիայի Արմէնիճէ քաղաքից էր, Յասոփի հետ միասին գնաց Հայաստան։ Նորանից իւր անունը ստացաւ Արմէնի, ինչպէս որ կասեն Փարսալիացի Աերսիլը և Լարիսսացի Մելիէին, որոնք մասնակցած էին Ալէքսանդրին արշաւանքներում։ Հայերի զգեստը բոլորովին նման է Թեսալիացիների զգեստին։ Հայերի մէջ ձիով շրջելու սէրը, ինչպէս Մարացիների մէջ, կասեն Թեսալիացիներից է մտած»։ Մի ուրիշ տեղում (XI, 53). «Ապատմեն թէ Յասոփ թեսալիացի Արմէնոսի հետ միասին հասաւ մինչև Իբերիա և Աղուանք և ճանապարհորդեց Հայաստանի և Մարաստանի շատ երկիրներում։ Արմէն, որ Արմէնիոն քաղաքից էր, Հայաստանը իւր անունով Արմէնիա անուանեց»։ Այսպիսի կարծիք հայկական ժողովրդի անունի ծագման մասին շատ անգամ կկրկնեն Հին մատենագիրները զանազան ձևերով։ Այս գեպում Յոյները յայտնի ժողովրդական միջոց կործ ղնէին երկրի ու ժողովրդի անունը բացատրելու մասնաւոր անձի անունով, Հին ժամանակն այսպէս կնայէին ազգերի անունների ծագմանը, ուստի լուսադոյն մատենագիրներն անգամ չկարողացան ազատվել այսպիսի հայեացքից։ Հնարելով մի որեւէ ազգի նախահօրն, նոքա համարձակ կ'ոյսացնէին նորանից մի յայտնի ազգ և իւրեանք կ'հաւատային իւրեանց հնարածին։ Օրինակ, նոցա կարծիքով, Պարսիկներն իւրեանց անունը ստացած են Դանոսի որդու Պերսէոսից կամ Պերսից, որ արեգակի որդի էր և Մեղէայի պապ։ Մեղացիները — Վողքիսի իշխանուհու որդի Մեղից, Փիւնիկեցիները — Վագմոսի եղբոր Փենիկիսից ևն։ Բայց ինչպէս կերեւի ոչ թէ միայն օտարազգի, այլ նոյն ինքն Հայերն ցանկացել են բացատրել օտարազգիներից իւրեանց տուած անունի ծագումն։ Խորենացուն (գիրք Ա, ԺԴ) յայտնի էին այս յուճական մեկնութիւնները, նա նոցա հաւատարի չէ ընդունում. բայց ինքն սիրիական աղբիւրների հիման վերայ, որոնք երկրային արժանաւորութիւն ունին, միւսնոյն սխալ կանէ, վերագրելով Հայերի անունի ծագումն զիւցարանական Արմէ թագաւորին, որ հայկեան սերունդից էր։ Սակայն Արամի անունից դուրս բերել Արմէն բառը շատ դժուար է։ Որպէս զի հասկանանք Խորենացու և այս առարկայի մասին սորա հայեացքն ունեցող ուրիշ պատմաբանների տեսակէտը, պէտքէ ենթադրել, որ օտարազգիները հայ ազգին Արմէն կանուանէին, որ մօտ է ժողովրդի անունին։ Բայց այսպիսի բացատրութիւնը բացի պատմական ճշմարտութիւն չունե-

նախուց, անհիմն է զեռ ևս ուրիշ կողմից: Աբգին բառի ցեղ նշանակելը իմանալու համար, նախ օտարները պարտական էին հայերէն սովորել և իմանալ թէ նորա մէջ էա վերջաւորութիւնը ստացական է, Իսկ Հայերից նորա շէին կարող առնել այս անունը, որովհետեւ նորա իւրեանց Հայ *) կանուանէին: Աւստի Խորենացու համոզումն, թէ աղբը իւր անունի երկրորդ նախահայրն կհամարէ Արամին, անհիմն է: Բացի սորանից յայտնի է, որ նախահայրերը միշտ ժողովրդական անունին աւելի մօտ են քան թէ այս դէպքում: Մենք կնկատենք որ այս դէպքում Խորենացու վերայ նշնապէս ազդեցութիւն ունեցել է ասորի գիտնականն, որը փոխած է սկզբնական նախահայրն (այսինքն որից ժողովուրդն առած է իւր անունը, որ էպօնիմ կասովի) իւր սիրիական էպօնիմի. որովհետեւ Ասորիքը նշնապէս Աբգին կանուանվէր: Բայց սորանից չէ կարելի եզրակացնել, որ Արամ անունը Հայերին օտար էր: Մենք կխօսենք միայն այն մասին, որ նա նոցա նախահայր էր: Որովհետեւ նա առը Արմէ անունի մէջ արմատական է, ուստի կարող ենք դիւրաւ ենթադրել, որ Հայերի էպօնիմը ժողովրդական աւանդութիւնների համաձայն ոչ թէ Արամ էր, այլ մի ուրիշ անձն, որ կրէր այնպիսի անունն, որի մէջ կրովանդակվէր Աբգին բառը: Այդպէս էր յունական Աբգն, իսկ Հայերի մէջ, Խորենացու համաձայն, Հայկի որդի Աբգն: Մենք այսպէս կկարծենք, Խորենացու համոզման հակառակ, եւ մեր կարծիքը կհաստատովի մասամբ թէ Սերէոսի ակնարկութիւններից, որը Արմենակին ազգի նախահօր տիտղոսը կտայ, և թէ Ներսէս Շնորհալու պարզ հաւատացնելովն (յայտնի չէ որտեղից է առած), որը ժողովրդի անունի ծագումն կվերագրէ ոչ թէ Արամին, այլ Աբգնին: Արմենի անունի մէջ ալ վերջաւորութեան և Հայի անունի մէջ չառ զործածական է հայերէնի մէջ իբրեւ բառի վերջ զրվօղ մասնիկը, որ նուազումն **) ցոյց կտայ, թէ և ոչ միշտ: Այսպէս է պ. Վիպերտի կարծիքն ևս, որի Ueber das älteste Volk und Landesgeschichte Armeniens վերնագրով գեղեցիկ յօդուածը (Monatsberichte der Berl. Akad. 1869, հր. 216—243) կհաղորդէ մեզ Խորենացու պատմութեան առաջին 10 գլուխների (Դ.—ԺԴ) շատ հետաքրքիր քննութիւնը: Հետեւեալ բացատրութեանից մենք աւելի կհամոզվինք, որ Հայերը իւրեանց անունի էպօնիմ ոչ թէ Արամին, այլ Արմենակին կհամարէին:

Փորձեր փորձած են նշնապէս այս անունի ծագումն բացառնորէն բացատրելու: Եռուստ րեքենք ուրիշներից աւելի հանգամանորէն գրված Շրպիգէլի կարծիքը (Eranische Alterthumskunde, I, 217—182), « Die Erwähnung dieses Namens (Armenia) in unseren Inschriften (von Behistan) ist wichtig ge-

(*) Տես նշնապէս ինչ որ կիսովի Հայկի եւ Արամի մասին. « Քանի մի խօսք հին հայկական ամիսների մասին » յօդուածում, եր. 5—6, 23—24.

(**) Բաղդատ. Պ. Վիպերտի յաջողակ համեմատութիւնը Romulus, Rutulus, Sicanus բառերի հետ:

nug, diese sichert ihm nach meiner Ueberzeugung das vollkommene Uebergewicht über den Namen Haik, wo mit die christlichen (sic!) Armenier ihr Vaterland benennen. Der Name ist derselbe wie das Griechische Armenia und das arabische Armin, Arminija. Bochart und Rawlinson haben auch bereits darauf aufmerksam gemacht, dass der zweite Theil des Namens in dem biblischen Minni enthalten sei, womit Jerem. 51, 27, eine Völkerschaft benannt wird, die nach der andern Völkern, die mit ihr genannt sind, in Armenien gesucht werden muss, und Ar könnte für hebr. har, oder altpersisch ara, Berg stehen, unq Armeniya könnte Har-minni, Berg der Minni sein, das Land der Minni. Das Land der Minni wird in obengenannter Stelle des Jeremia mit dem Ararat verbunden und Nicolaus Damascenus (bei Joseph. Ant. l. 3. 6) erwähnt eine armenische Landschaft bei dem Berge Baris, aut dem die Trümmer der Arche zu finden seien. Mit Recht erinnert St. Martin (Mém. sur l'Arm. l. 250) an den armenischen Namen Manavaz und das in der Nähe (?) des Ararat gelegene Manavazgert, der heutige Melasgerd. Von dieser kleinen Provinz aus mag sich dann der Name über das ganze Land verbreitet haben *).

Բօխարտի այս կարծիքի հետ հազիւ թէ կարելի է անպայման համաձայնել, որի հետ Շպիդէլը համաձայն է: Մենք Հայերի անունը կդռնենք զրեթէ միևնույն ժամանակում (Զ.—Ե դարերում Ք. Մ. առաջ) Պարսիկների և Յդյների մէջ, Հայաստանի արեւելքում և արեւմուտքում, երկրի միմեանց հակառակ սահմաններում, և չենք կարողանում պարզ երեւակայել, թէ ինչպէս այս ազգերը, որոնք Հայերի անմիջապէս զրացիներն էին, համաձայնեցան անուննել Minni (Միննի) սարերի բնակիչների, այն ազգին, որ շատ քիչ յայտնի է և որի անունը իբր թէ պահպանված էր Միննիաս նահանգի անունի մէջ, (Պամասկացու մէջ), որը նոյն է թէ Մանաւաղեան նախարարութեան մէջ եղած Մանաղկերտ քաղաքը: Գիցուք թէ այդպէս է: Բայց Har-mini հնչումն բաւական հեռու է Արփէ-նից, որը սկզբում է առաւ չունի և որտեղ երկրորդ ձայնաւորը ոչ թէ է, այլ է է: Ենթադրենք մինչև անգամ թէ որ և իցէ սեմական լեզուի մէջ կարող էր գտնվել Ար, սար, իբր Har-ի տեղ, և Միննի հետ միանալով կազմվել է Ար-Քէ: Արեւմն այս անունը Հայերին տուած են ոչ թէ Արիացիների, այլ սեմիտական ազգեր: Բայց մենք ընդհակառակն կտեսնենք: Հին սեմիտական ազգերը Հայերին բոլորովին ուրիշ անուն կտան, և միայն Արիացիները կգործածէին այս անունը:

Պալով har բառին, նա զենդականի մէջ և կգտնվի hara ձևով, սար. այնպէս որ զեռ ևս հարցը վճռված չէ, թէ այս բառը իսկապէս որ ճիւղին

(*) Bocharti, Phaleg, Lib. cap. III,—Videtur enim Armeniae vox conflata esse ex Har-mini id est Mons Mini, sive montana Minyadis. Բառաւիճութիւնը որքան մեղ յայտնի է, ամենեւին այս կարծիքի չէ: Տես History of Herodotus by G. Raulinsen, new edit. 1862. Հատ Գ. եր. 204. nota 1.

կայատկանի: Պարտկազան սեպածե արձանագրութիւնների մէջ Աբ-հ-բ-է-ն (Հպիգ. 184) սարի անունը կպատահի, որի մէջ առաջին բաժանիկը, ըստ ենթադրութեան, սար պիտի նշանակէ: Այս ենթադրութիւնն ևս ընդունենք Աբ-հ-բ-է-ն (Ալագեազ) Աբ-բ-ն սարերի և Աբ-բ-ն լեռնային երկրի անուններն աչքի առաջ ունենալով: Բայց այդ պէպքում ևս, այսինքն եթէ Աբ-հ-բ-է-ն անունը (Արա - միւսի բառից) տուած են Իրանական ազգերը, չէ կարելի եզրակացնել թէ այս բառի գործածութիւնը պարտաւորական լինէր Յոյների մէջ, որոնք իւրեանց զիջքի համեմատ Հայերի հետ պիտի յարաբերութիւններ ունենային: Պարսիկներից անկախ, ուստի որ և իցէ անուն տալու էին նոցա առանց սպասելու, որ Պարսիկներն իւրեանց լեզուի մէջ Հայաստանի բնակիչների համար վայելուչ անուն հնարէին:

Այլև քանի մի ազգերի և նոցա գլխաւոր աստուածների անունների նըմանութենից կծագի դարձեալ մի ենթադրութիւն, որը մի կողմից կարող է պարզել, իսկ միւս կողմից աւելի խառնել մեզ հետաքրքրող հարցը: Յայտնի է, որ Ասորեստանցիների և Ասոր աստուծու, Քաղզէացիների և Քաղզէ աստուծու (Վանի մէջ) անունների մէջ կկարծւի թէ ծննդարանական կապ կայ: Նոյնպիսի մի աստուած Հայերի անունի համար յառաջ կգայ Աբ-հ-բ-է-ն, որին, մի սեպածե դիցարանական աղիւսակի վկայութեան համաձայն, կաշառէին Սուգիանայի մէջ: Տես Rawlison, Herodotus, 1862, IV, հր. 205:

(Աբ-հ-բ-է-ն)

Ս. Տ. Գ.

ԳԱՂՏՆԻ ՎԿԱՅ:

— Այս կինը բոլորովին սովից մեռնումէ, և այդ փողերը կարող էին նորան փրկել:

Այսպիսի խօսքեր ասվեցան իմ և իմ բարեկամ միտեր Զօն Իրվի-նի խօսակցութեան ժամանակ:

Սեպտեմբերի մի գեղեցիկ առաւօտ մենք երկուքս նստած էինք մեր բնդհանուր բարեկամ Նօրտվիկ — Բալզամի կառավարիչ յարգոյամեծար Հէնրի Տիգօնի պարտեզի մէջ հովարանում: Բերկշէրի կոմսութեան մէջ:

Մեր խօսակցութեան նիւթը Հարդինգ անունով հարուստ վաճառականի դարչելի արարքն էր, որը թողած էր վաճառականութիւնը և որն իւր հարեան այրի կնոջ պարտական էր 100 ֆունտ ստերլինգ, որովհետեւ կնոջ այրը Հարդինգի մօտ աշխատելով մեռած էր առանց իւր վարձը ստանալու: Հարդինգը հերքումէր նորա իրաւունքը և միշտ մերժումէր փող տալ նորան:

— Սակայն ևս այդ կարգադրեցի — ասաց բարեկամս բարեսիրտ ժպիտով: — Հարդինգը կերպով իմն իմ ձեռիս է: Սորանից քանի մի տարի առաջ նորա առոււտուրի մէջ շատ անմաքուր գործեր խառն էին, բոլոր այն գործերը, որոնք վերաբերվումէն այս խնդրին, կատարվեցան իմ պաշտօնական գոր-